Արտատպված է՝ Ի. Ա. Բունին, Վիպակներ և պատմվածքներ, Ե., «Սովետական գրող» հրատարակչություն, 1998. Դորա Եսայանի թարգմանությամբ:

ՄԵԾ ՊԱՍԻ ԱՌԱՋԻՆ ԵՐԿՈՒՇԱԲԹԻՆ

Մթնում էր մոսկովյան գորշ ձմեռային օրը, սառը վառվում գազը լապտերների մեջ, տաք լուսավորվում էին խանութների ցուցափեղկերը, և սկսվում էր իրիկնային, ցերեկվա գործերից ազատված մոսկովյան կյանքը. ավելի կայտառ էին սլանում սահնակակառքերը, ավելի ծանր էին դղրդում լեփ-լեցուն տրամվայները,— կիսամթի մեջ արդեն երևում էր, ինչպես ֆշշոցով հաղորդալարերից կանաչ աստղիկներ էին թափվում,— ձյունածածկ մայթերով ավելի աշխույժ շտապում էին պղտոր սևին տվող անցորդները. . . Ամեն երեկո այդ ժամին իմ կառապանը վարգաձին խարազանելով սլացնում էր ինձ Կրասնիե Վորոտայից դեպի Փրկիչի տաճարը. նա ապրում էր այդ տաճարի դիմաց. ամեն երեկո ես նրան տանում էի ճաշելու «Պրագա», «Էրմիտաժ», «Մետրոպոլ» ճաշից հետո՝ թատրոններ, համերգների, իսկ հետո «Յար», «Ստրելնա»... Ինչո՞վ էր այս ամենը վերջանալու, չգիտեի և աշխատում էի չմտածել, չհասկանալ, դա ավելորդ էր, ինչպես նաև ավելորդ էր խոսել նրա հետ այդ մասին, նա մեկընդմիշտ մերժել էր որևէ խոսակցություն մեր ապագայի մասին. նա խորհրդավոր էր, անհասկանալի ինձ համար, տարօրինակ էին և մեր փոխհարաբերությունները. լրիվ մոտիկություն մեր մեջ դեռ չէր եղել, և այդ ամենը ինձ մշտապես պահում էր վերջ չունեցող լարվածության և տառապալից սպասումի վիճակում, բայց և միաժամանակ անասելիորեն երջանիկ էի նրա հետ անցկացրած ամեն ժամից:

Նա չգիտես ինչու սովորում էր ինստիտուտում, բավական հազվադեպ, բայց գնում էր դասերի: Մի անգամ հարցրի «Ինչո՞ւ», նա ուսերը թոթվեց. «Իսկ ինչո՞ւ է արվում որևէ բան աշխարհում: Արդյո՞ք մենք հասկանում ենք մեր արարքները: Եվ հետո, ինձ հետաքրքրում է պատմությունը. . . »: Ապրում էր նա մենակ, նրա այրիացած հայրը, նշանավոր վաճառականական տոհմից լուսավորյալ մի մարդ, հանգիստ ապրում էր իր համար Տվերում, ինչպես իր նման բոլոր վաճառականները, ինչ-որ բաներ էր հավաքում: Փրկիչի վանքի դիմաց նա հինգերորդ հարկում անկյունային բնակարան էր վարձում Մոսկվայի վրա բացվող տեսարանի պատճառով,

ընդամենը երկու սենյակ, սակայն ընդարձակ և լավ կահավորված: Առաջին սենյակում շատ տեղ էր գրավում լայն թուրքական բազմոցը, դրված էր թանկագին դաշնամուր, որի վրա նա շարունակ սովորում էր «Լուսնի սոնատի»[1] միայն սկիզբը,— դաշնամուրի վրա և հայելու տակդիրին սկահակների մեջ միշտ թարմ շքեղ ծաղիկներ էին դրված,— իմ կարգադրությամբ ամեն շաբաթ օր նրա համար թարմ ծաղիկներ էին բերում,— և երբ շաբաթ երեկոյան գալիս էի նրա մոտ, նա բազմոցին պառկած, որի գլխին հայտնի չէ ինչու կախված էր ոտաբոբիկ Տոլստոյի դիմանկարը, առանց շտապելու մեկնում էր ինձ ձեռքը համբույրի ու անտարբեր ասում. «Շնորհակալություն ծաղիկների համար. . . »: Բերում էի նրան շոկոլադի տուփեր, նոր գրքեր՝ Հոֆմանսստալի, Շնիցլերի, Տետմայերի, Պշիբիշևսկու[2], ու արժանանում նույն «շնորհակալությանը» և ինձ մեկնված ձեռքին, երբեմն նաև հրամանի նստելու իր կողքին, բազմոցին, առանց վերարկուս հանելու: «Չգիտեմ ինչու,— ասում էր նա մտազբաղ, նայելով իմ կղբենու օձիքին,— բայց թվում է չկա ավելի լավ բան, քան ձմեռային օդի բուրմունքը, որ մարդու հետ ներս է գալիս դրսից. . . »: Նրան, թվում էր, ոչինչ պետք չէր՝ ոչ ծաղիկ, ոչ գրքեր, ոչ ճաշերը, թատրոնները, ընթրիքները քաղաքից դուրս, թեև ծաղիկների մեջ ուներ սիրելի և ոչ սիրելի, բերածս բոլոր գրքերը կարդում էր, շոկոլադ ուտում էր օրական մի տուփ, ճաշին և ընթրիքին ուտում էր ինձնից ոչ քիչ, սիրում էր կարկանդակ շերեփաձկան ապուրով, վարդագույն սալամբիկներ կաթնասերի մեջ լավ տապակած, երբեմն ասում էր. «Չեմ հասկանում, ինչպես մարդիկ չեն ձանձրանում ամբողջ

---

[1] Բեթհովենի 14-րդ սոնատը:

[2] **Հոֆմանսստալ Հուգո ֆոն** (1874—1929) — ավստրիական գրող-մոդեռնիստ: **Շնիցլեր Արտուր** (1862—1931) — ավստրիական դրամատուրգ և արձակագիր: **Պշիբիշևսկի Ստանիսլավ** (1868—1927) — գերմաներեն և լեհերեն գրող, լեհ գրող-դեկադենտ (ծթ.):

կյանքում ամեն օր ճաշելուց, ընթրելուց»,— իսկ ինքը ճաշում և ընթրում էր այդ գործի մոսկովյան իմացությամբ: Նրա բացահայտ թուլությունը միայն լավ հագուստն էր՝ թավիշը, մետաքսը, թանկագին մորթիները. . .

Երկուսս էլ հարուստ էինք, առողջ, ջահել, և այնքան գեղեցիկ, որ ռեստորաններում, համերգներում նայում էին մեր ետևից: Ես, ծննդյամբ լինելով Պենզայի նահանգից, այդ շրջանում գեղեցիկ էի չգիտես ինչու հարավային, տաք գեղեցկությամբ, նույնիսկ «անպատշաճ գեղեցիկ էի», ինչպես մի անգամ ասաց իմ մասին նշանավոր մի դերասան, հրեշավոր գեր մի մարդ, ահռելի շատակեր և խելացի: «Սատանան գիտե, թե դուք ով եք, կարծես սիցիլիացի լինեք»,— ասաց նա քնատ. և բնավորությունս էլ էր հարավցու՝ աշխույժ, միշտ պատրաստ ուրախ ժպտալու, բարի կատակի: Իսկ նրա գեղեցկությունը մի տեսակ հնդկական էր, պարսկական. թուխ-սաթագույն դեմք, շքեղ և թավությամբ ու սևությամբ մի քիչ չարագուշակ մազեր, որ մեղմ փայլում էին սև սամույրի մորթու նման, հոնքերը, աչքերը թավշյա-ածխասև. թավշյակարմիր հմայիչ շրթունքներով բերանը ընդգծվում էր մուգ աղվամազիկով. տեղ գնալիս նա ամենից հաճախ հագնում էր նռնագույն թավշյա զգեստը և նույնպիսի կոշիկներ ոսկե ճարմանդներով (իսկ դասերի գնում էր համեստ հագնված, նախաճաշում երեսուն կոպեկով Արբատում գտնվող ճաշարանում), և որքան ես սիրում էի խոսել, զրուցել, պարզսիրտ ուրախանալ, այնքան նա լռակյաց էր, սիրում էր լռել. շարունակ մտածում էր, շարունակ աշխատում մտովի ինչ-որ բան ըմբռնել. գիրքը ձեռքին բազմոցին պառկած, հաճախ ցած էր գցում և հարցական նայում իր դեմը. ես այդ տեսնում էի երբեմն ցերեկները մոտը գնալիս, որովհետև ամեն ամիս նա մի երեք-չորս օր բոլորովին դուրս չէր գալիս տնից, պառկում էր ու կարդում, ստիպելով ինձ, որ ես էլ նստեմ բազմոցի կողքի թիկնաթոռին ու լուռ կարդամ:

— Դուք սարսափելի շատախոս եք և անհանգիստ,— ասում էր նա,— թողեք գլուխը վերջացնեմ:

— Եթե շատախոս ու անհանգիստ չլինեի, երևի երբեք ձեզ չճանաչեի,— պատասխանում էի, դրանով հիշեցնելով նրան մեր ծանոթանալը. մի անգամ դեկտեմբերին ընկնելով Գեղարվեստական խմբակ՝ Անդրեյ Բելիի դասախոսությանը,որը երգում, վազվզում ու պար էր գալիս բեմում, ես այնպես էի տեղումս շուռումուռ գալիս և հռհռում, որ նա, պատահմամբ լինելով իմ կողքի բազկաթոռին և սկզբում որոշ զարմանքով նայելով ինձ, ի վերջո նույնպես ծիծաղեց, և ես անմիջապես ուրախ խոսեցի նրա հետ:

— Այդպես է,— ասում էր նա:— Բայց, համենայն դեպս, մի քիչ լռեք, մի բան կարդացեք, ծխեք. . .

— Չեմ կարող լռել: Չեք պատկերացնում, թե ինչքան եմ ձեզ սիրում: Դուք չեք սիրում ինձ:

— Պատկերացնում եմ: Իսկ ինչ վերաբերում է իմ սիրուն, դուք լավ գիտեք, որ հորիցս ու ձեզնից բացի, ես ոչ ոք չունեմ աշխարհում: Համենայն դեպս, դուք իմ առաջինն եք ու վերջինը: Դա քի՞չ է ձեզ համար: Բայց բավական է այս մասին: Ձեր ներկայությամբ կարդալ հնարավոր չէ, եկեք թեյ խմենք. . .

Ու ես վեր էի կենում, բազմոցի կողքի բացովի սեղանիկի վրա ջուր էի եռացնում էլեկտրական թեյամանով, ընկուզենու փայտից փոքրիկ պահարանից, որ դրված էր սեղանի ետևը՝ անկյունում, վերցնում էի գավաթները, պնակները, ասելով ինչ գլուխս էր գալիս:

— «Հրե հրեշտակը»[3] կարդացիք վերջացրի՞ք:

— Նայեցի մինչև վերջ: Այն աստիճանի վերամբարձ է գրված, որ ամաչում ես կարդալ:

— Իսկ ինչո՞ւ երեկ հանկարծ գնացիք Շալյապինի համերգից:

— Չափազանց հանդուգն էր: Եվ հետո դեղնամազ Ռուսիան ես ընդհանրապես չեմ սիրում:

— Ոչ մի բան չեք հավանում:

— Այո, շատ բան. . .

---

[3] Վ. Յու. Բրյուսովի վեպը (ծթ.):

«Տարօրինակ սեր է»,— մտածում էի, և, մինչ ջուրը կեռար, կանգնած դուրս էի նայում պատուհանից: Սենյակում ծաղկի բուրմունք էր, և նա ինձ համար միանում էր այդ բույրին. մի պատուհանից հեռվում ցած փռված էր գետից այն կողմ ընկած ձյունե-գորշակապույտ Մոսկվայի հսկայական պատկերը, մյուս, ավելի ձախի պատուհանից երևում էր Կրեմլի մի մասը, դիմացից, մի տեսակ չափից ավելի մոտ սպիտակին էր տալիս Քրիստոս Փրկիչի չափազանց նոր հսկայազանգվածը, որի ոսկե գմբեթին կապտավուն բծերի նման արտացոլվում էին շարունակ շուրջը պտտվող արջնագռավները. . . «Տարօրինակ քաղաք է»,— ասում էի ինքս ինձ, մտածելով Օխոտնի ռյադի, Իվերսկայայի[4], Վասիլի Բլաժենիի մասին: Վասիլի Բլաժենի և Սպաս-նա-բորու, իտալական տաճարներ, ու նաև կիրգիզական ինչ-որ բան կրեմլյան պատերի աշտարակների սուր ծայրերին. . . »:

Մթնշաղին գալիս, նրան երբեմն տեսնում էի բազմոցին պառկած միայն մետաքսե արխալուղով[5], սամույրով եզերված,— Աստրախանի տատիս ժառանգությունը, ասաց նա,— նստում էի նրա կողքին կիսամթի մեջ, առանց լույսը վառելու, ու համբուրում էի նրա ձեռները, ոտքերը, զարմանալի, նուրբ ու հարթ մաշկով մարմինը. . . Եվ նա ոչնչի չէր դիմադրում, բայց շարունակ լուռ: Անդադար որոնում էի նրա տաք շրթունքները, նա տալիս էր իր շուրթերը, արդեն բորբոքված շնչով, բայց դարձյալ լուռ: Իսկ երբ զգում էր, որ այլևս ի վիճակի չեմ ինձ տիրապետելու, մի կողմ էր հրում ինձ, նստում էր և, առանց ձայնը բարձրացնելու, խնդրում վառել լույսը, հետո գնում էր ննջարան: Վառում էի լույսը, նստում դաշնամուրի մոտի պտտվող աթոռակին և կամաց-կամաց ուշքի գալիս, հանդարտվում այրող շմոլքից: Քառորդ ժամ հետո նա դուրս էր գալիս ննջարանից հագնված, պատրաստ մեկնումի, խաղաղ և պարզ, ասես ոչինչ չէր եղել մինչ այդ:

— Այսօր ո՞ւր ենք գնում: Միգուցե «Մետրոպո՞լ»:

Եվ նորից ամբողջ երեկո խոսում էինք կողմնակի բաների մասին: Մեր մտերմանալուց որոշ ժամանակ անց, երբ խոսեցի ամուսնության մասին, նա ասաց ինձ.

— Ոչ, ես կին լինելու հարմար չեմ: Հարմար չեմ, հարմար չեմ. . .

Դա ինձ չհուսահատեցրեց: «Դեռ կտեսնենք»,— ասացի ինքս ինձ այն հույսով, որ ժամանակի ընթացքում նրա վճիռը կփոխեմ, և այլևս խոսք չբացեցի ամուսնության մասին: Մեր ոչ լրիվ մոտիկությունը հաճախ ինձ համար անտանելի էր լինում, սակայն ի՞նչ կարող էի անել, եթե ոչ հույս դնել ժամանակի վրա: Մի անգամ իրիկվա մթության մեջ նրա կողքին նստած, հանկարծ բռնեցի գլուխս.

— Ոչ, սա իմ ուժերից վեր է: Եվ ինչու, ինչի համար այսպես դաժանորեն տանջում ես ինձ էլ, քեզ էլ:

Նա լռեց:

— Այո, այնուամենայնիվ, սա սեր չէ, սեր չէ. . .

Նա հանգիստ պատասխանեց մթության միջից.

— Գուցեև: Ո՞վ գիտե, թե ինչ է սերը:

— Ես, ես գիտեմ,— բացականչեցի:— Եվ պիտի սպասեմ, մինչև դուք էլ դա իմանաք, իմանաք ինչ է սերը, երջանկությունը:

— Երջանկություն, երջանկություն…

«Երջանկությունը մեր, բարեկամս, ոնց որ ջուրն ուռկանի մեջ: Ձգում ես՝ լիքն է, դուրս ես քաշում՝ մեջը բան չկա»:

---

[4] Իվերսկայա — մատուռ իվերյան աստվածամոր, որ գտնվում էր Կարմիր հրապարակի մուտքի մոտ, Պատմական թանգարանի շենքի կողքին: Սպաս-նա-բորու-վանք XIV դար. Կրեմլում, չի պահպանվել: Վասիլի Բլաժենի — Պոկրովյան տաճար Կարմիր հրապարակում, կառուցված 1555—1560 թթ.: Իտալական տաճարներ Կրեմլում — Արխանգելսկի տաճարը (1505—1509), Ուսպենսկի տաճարը (1475—1479 թթ), որ կառուցել են իտալական ճարտարապետ-քանդակագործները ռուս վարպետների մասնակցությամբ (ծթ.):

[5] Բունինն օգտագործել է հենց այս բառը:

— Ի՞նչ ես ասում:

— Դա Պլատոն Կարատաևն էր ասում Պիեռին:

Ձեռքս թափ տվեցի:

— Ահ, գործ չունեմ այդ արևելյան իմաստության հետ: Եվ դարձյալ ամբողջ երեկո խոսում էր միայն կողմնակի բաների մասին. Գեղարվեստական թատրոնի նոր բեմադրության, Անդրեևի նոր պատմվածքի. . . Ինձ համար այնքանն էլ արդեն բավական էր, որ ես ահա նախ կիպ նստած եմ նրա կողքին արագ սլացող ու ցնցվող սահնակում, պահում եմ նրան փափուկ մորթե մուշտակի վրայից գրկած, հետո մտնում եմ նրա հետ ռեստորանի մարդաշատ սրահ «Ադիդայի» քայլերգի տակ, ուտում և խմում եմ նրա կողքին, լսում եմ նրա դանդաղ ձայնը, նայում շուրթերին, որ համբուրում էի մի ժամ առաջ՝ այո, համբուրում էի, ասում էի ինքս ինձ հրճվագին երախտագիտությամբ նայելով այդ շուրթերին, վրայի մուգ աղվամազիկին, զգեստի նռնագույն թավիշին, թեք

ուսերին, զգում նրա մազերի փոքր-ինչ քաղցրավուն բույրը, մտածելով «Մոսկվա, Աստրախան, Պարսկաստան, Հնդկաստան»: Քաղաքից դուրս ռեստորաններում ընթրելիս, վերջում, երբ շուրջը գնալով ավելի աղմկոտ էր դառնում, ծխախոտի թանձր ծխի մեջ, նա, նույնպես ծխելով ու հարբելով, տանում էր ինձ երբեմն առանձին սենյակ, խնդրում կանչել գնչուներ, և նրանք ներս էին մտնում դիտավորյալ աղմկոտ, սանձարձակ. խմբի առջևից, կիթառը երկնագույն ժապավենով ուսից կախ, գալիս էր ծեր գնչուն՝ տրեզակարերով կազակին հագած, ջրահեղձի կապտագորշ դեմքով, թուջե գնդի նման լերկ գլխով, նրա ետևից գալիս էր նախերգիչ գնչուհին ձյութի գույնի մազափնջի տակից նեղ ճակատով. . . Նա լսում էր երգերը թախծագորով, տարօրինակ քմծիծաղով. . . Գիշերվա ժամը երեքին-չորսին տանում էի նրան տուն կառքով, երջանկությունից աչքերս փակած, համբուրում նրա օձիքի թաց մորթին ու մի հրճվալից հուսահատությամբ սլանում դեպի Կրասնիյե Վորոտա: Եվ վաղը, և մյուս օրը կլինի նույնը, մտածում էի, նորից նույն տառապանքն ու նույն երջանկությունը. . . Էհ, այնուամենայնիվ, երջանկություն, մեծ երջանկություն:

Այդպես անցան հունվարը, փետրվարը, եկավ ու անցավ Բարեկենդանը: Մեծ պասի առաջին երկուշաբթիին նախորդող կիրակի նա հրամայեց ինձ գալ իր ետևից երեկոյան հինգին: Գնացի, նա արդեն հագնված էր, կարակուլե կարճ մուշտակով, կարակուլե գլխարկով, սև ֆետրե կոշիկներով:

— Ամբողջ սև,— ասացի, սովորականի պես ուրախ ներս մտնելով:

Նրա աչքերը քնքշալից էին և խաղաղ:

— Չէ՞ որ վաղը մեծ պասի առաջին երկուշաբթին է,— պատասխանեց նա, կարակուլե ձեռնամուշտակից հանելով ու ինձ մեկնելով սև լայքայե ձեռնոցով ձեռքը:— «Տէր ամենակալ, որ տիրակալդ, որուայնի իմոյ. . . »: Կուզեի՞ք գնալ Նովոդեվիչի վանք:

Զարմացա, բայց շտապեցի ասել.

— Ուզում եմ:

— Թե չէ մի գլուխ պանդոկներ, պանդոկներ,—

ավելացրեց նա:— Այ, երեկ առավոտյան գնացել էի Ռոգոժսկի գերեզմանոց. . .

Է՛լ ավելի զարմացա.

— Գերեզմանո՞ց: Ինչո՞ւ: Այն նշանավոր աղանդավորական գերեզմանո՞ցը:

— Այո, աղանդավորական: Մինչայոտրյան Ռուսիա: Թաղում էին արքեպիսկոպոսին: Եվ ահա պատկերացրեք. դագաղը՝ կաղնեփայտե տաշտ, ինչպես հնագույն ժամանակներում, ոսկե դիպակ, ասես կռածո, հանգուցյալի դեմքը ծածկված սպիտակ «օդային» շղարշով, ասեղնագործված խոշոր

սև զարդագիրով՝ գեղեցկություն և սարսափ: Իսկ դագաղի մոտ սարկավագներ ռիպիդներով և տրիկիրիաներով[6]. . . Այդ բոլորը որտեղի՞ց գիտեք: Ռիպիդներ, տրիկիրիաներ:

— Դուք է, որ ինձ չգիտեք:

— Չգիտեմ, որ այդքան կրոնապաշտ եք:

— Դա կրոնապաշտություն չէ: Չգիտեմ ինչ է... Բայց ես, օրինակ, հաճախ առավոտները կամ երեկոները, երբ ինձ քարշ չեք տալիս ռեստորաններ, գնում եմ Կրեմլի տաճարները, իսկ դուք իսկի չեք էլ կասկածում. . . Այսպես, ահա. սարկավագներ՝ և ինչպիսի՜: Պերեսվետ և Օսլյաբյա[7]: Եվ երկու դասերին՝ երկու երգչախումբ, նույնպես բոլորը Պերեսվետներ. բարձրահասակ, հաղթանդամ, երկար սև կապաներով, երգում են մեկը մյուսին ձայն տալով՝ մեկ մի խումբը, մեկ՝ մյուս, և բոլորը ներդաշնակ, ու ոչ թե նոտաներով, այլ «խազերով»: Իսկ գերեզմանը ներսից պատած էր եղևնու փայլուն ճյուղերով, ու դրսում սառնամանիք էր, արև, կուրացուցիչ ձյուն. . . Ասենք, դուք այդ չեք հասկանում: Գնանք. . .

Խաղաղ, արևոտ իրիկուն էր, ծառերը եղյամով ծածկված. վանքի աղյուսե-կարմիր պատերին լռության մեջ ճռվողում էին արջնագռավները, նման գիշերաթիթեռնիկների, աշտարակի հնամենի ժամացույցը շուտ-շուտ բարալիկ ու թախծալի նվագում էր զանգակատանը: Լռության մեջ, ձյունը հռհռացնելով, ներս մտանք դարպասից, ձյունածածկ արահետով քայլեցինք գերեզմանոցի միջով. արևը հենց նոր էր մայր մտել, դեռ լույս էր, մայրամուտի ոսկյա էմալի վրա մոխրագույն մարջանի նման գեղեցիկ ուրվագծվում էին եղյամապատ ճյուղերը, և մեր շուրջ խորհրդավոր մարմրում էին հանդարտ, տխուր կրակները գերեզմանների վրա ցրված անմար կանթեղների: Քայլում էի նրա ետևից, քնքշանքով նայում նրա փոքրիկ ոտնահետքերին, որ թողնում էին ձյան վրա նոր սև կոշիկները, նա հանկարծ շրջվեց՝ զգալով հայացքս.

— Իսկապես, ինչպես եք ինձ սիրում,— ասաց նա մեղմ զարմանքով, գլուխն օրորելով:

Կանգնեցինք Էրտելի, Չեխովի գերեզմանների մոտ: Ձեռքերը ցած պահած ձեռնամուշտակի մեջ, նա երկար նայում էր Չեխովի գերեզմանի հուշարձանին, հետո ուսը թոթվեց.

— Ինչ նողկալի խառնուրդ ռուսական նրբաթերթ մետաղյա ոճի և Գեղարվեստական թատրոնի:

Սկսեց մթնել, ցրտեց, դանդաղ դուրս եկանք դարպասից, որի մոտ հլու-հնազանդ սպասում էր իմ Ֆյոդորը, կառապանի տեղում նստած:

— Մի քիչ էլ շրջենք,— ասաց նա,— հետո գնանք վերջին բլիններն ուտելու Եգորովի մոտ. . . Միայն շատ արագ մի քշեք, Ֆյոդոր, լա՞վ:

— Լսում եմ:

— Օրդինկայի վրա մի տուն կա, ուր ապրել է Գրիբոյեդովը: Գնանք որոնենք. . .

Չգիտես ինչու գնացինք Օրդինկա, երկար շարժվում էինք ինչ-որ նրբանցքներով, եղանք Գրիբոյեդովի նրբանցքում. բայց ո՞վ կարող էր մեզ ցույց տալ, թե որտեղ է ապրել Գրիբոյեդովը, և ո՞ւմ էր պետք Գրիբոյեդովը: Արդեն վաղուց մթնել էր, եղյամածածկ ծառերի ետևում վարդագունել էին լուսավորված պատուհանները. . .

— Այստեղ է և Մարֆո-Մարինյան մենաստանը[8],— ասաց նա:

Ծիծաղեցի.

— Դարձյա՞լ մենաստան:

— Ոչ, հենց այնպես ասացի. . .

---

[6] Ռիպիդ — կլոր, փայտի վրա ամրացրած սրբապատկեր: Տրիկիրիա (հուն.) եկեղեցական եռամոմ (ծթ.):
[7] Պերեսվետ Ալեքսանդր և Օսլյաբյա Ռոդիոն (XIV դար) — Տրոիցե Սերգիև վանքի վանականներ, Կուլիկովյան ճակատամարտի հերոսներ (ծթ.):

[8] Կրոնական համայնք, որտեղ հոգ էին տանում որբերի և վիրավորներին՝ առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ (ծթ.):

Օխոտնի ռյադում Եգորովի պանդոկի ցածի հարկում լցված էին փրչոտ, հաստ հագնված կառապաններ, որ կույտ-կույտ բլիններ էին հուպ տալիս՝ վրան առատորեն յուղ ու թթվասեր լցրած, ու շոգ էր, ինչպես բաղնիքում: Վերնասենյակներում, նույնպես շատ տաք, ցածր առաստաղներով, ավանդամոլ վաճառականները ուտում էին տաք-տաք բլիններ խավիարով ու խմում սառնասառը շամպայն: Մենք մտանք երկրորդ սենյակ, ուր անկյունում, երեքձեռնանի աստվածամոր սրբապատկերի սև տախտակի առջև վառվում էր կանթեղ, նստեցինք երկարուկ սեղանի առջև սև կաշվե բազմոցին. . . Նրա վերին շրթունքի աղվամազիկը եղյամապատ էր, այտերի սաթագույնը թեթևակի վարդագունել էր, ծիածանաթաղանթի սևը բոլորովին ձուլվել էր բիբի հետ. հիացած՝ աչքս չէի կարողանում կտրել դեմքից: Իսկ նա խոսում էր, օծանելիքաբույր ձեռնամուշտակից հանելով թաշկինակը.

— Լավ է: Ներքևում վայրենի գյուղացիներ, իսկ այստեղ բլիններ շամպայնով և երեքձեռնանի աստվածամայրը: Երեք ձեռք: Իսկական Հնդկաստան: Դուք ազնվական աղա, դուք չեք կարողանա այնպես, ինչպես ես լիովին հասկանալ այս Մոսկվան:

— Կարող եմ, կարող եմ,— պատասխանում էի ես:— Իսկ հիմա եկեք պատվիրենք ճաշ սիլեն[9]:

— Ինչ բան է «սիլենը»:

— Դա նշանակում է՝ ուժեղ: Ինչպե՞ս չգիտեք: «Խոսք Գյուրգիի»:

— Ինչ լավ է: Գյուրգի:

— Այո, իշխան Յուրի Երկայնաբազուկին: «Խոսք Գյուրգիի Սվյատոսլավին, Սեվերյան իշխանին: «Եվ, եկ ինձ մոտ, եղբայր, Մոսկվա, ու հրաման տամ ճաշ սարքել՝ սիլեն»:

— Ինչ լավ է: Եվ ահա ինչ-որ հյուսիսային վանքում է միայն պահպանվել այդ Ռուսիան: Ու մեկ էլ եկեղեցական ժամերգություններում: Վերջերս գնացել էի Զաչատյեվյան վանք, դուք պատկերացնել անգամ չեք կարող, թե ինչ սքանչելի են երգում ժամաշապիկ հագած եկեղեցականները: Իսկ Չուդովոյում ավելի լավ էին երգում: Անցյալ տարի շարունակ գնում էի այնտեղ Չարչարանացին: Ախ, ի՜նչ լավ էր: Ամեն տեղ ջրափոսեր, օդն արդեն մեղմացած, գարնանային, հոգիդ մի տեսակ քնքշացած, տխուր ու շարունակ այդ զգացումը հայրենիքի, նրա հնության. . . Տաճարի բոլոր դռները բաց են, ամբողջ օրը ներս ու դուրս է անում հասարակ ժողովուրդը, ամբողջ օրը ժամերգություն. . . Օհ, կգնամ մի որևէ մենաստան, որևէ ամենախուլ վանքը՝ Վոլոգդայի, Վյատկայի:

Ուզում էի ասել, որ այդ դեպքում ես էլ կգնամ կամ որևէ մեկին կմորթեմ, որ ինձ քշեն Սախալին, ծխեցի, հուզմունքից ինձ կորցրած, բայց մոտեցավ սպասավորը սպիտակ շալվարով ու սպիտակ բլուզով, մորեգույն քուղով գոտեվորված, հարգալից հիշեցրեց.

— Ներեցեք, պարոն, մեզ մոտ ծխել չի կարելի. . .

Ու անմիջապես չափազանց հաճոյակատարությամբ, սկսեց հարցնել.

— Բլինների հետ ի՞նչ կհրամայեիք: Տնական խոտաթրմղի: Խավիա՞ր, սաղմո՞ն: Ձկնապուրի հետ ունենք խերես արտակարգ լավը, իսկ փրփրուկի հետ. . .

— Փրփրուկի հետ էլ խերես,— ավելացրեց նա, ուրախացնելով ինձ իր լավ զրուցասիրությամբ, որպիսի տրամադրության մեջ էր ամբողջ երեկո: Եվ արդեն ուշադիր չէի լսում, թե ինչ էր խոսում հետո: Իսկ նա խոսում էր աչքերի մեջ մեղմ մի լույսով.

— Ռուսականը, տարեգրականը, ռուսական ասքերը ես այնքան եմ սիրում, որ նորից ու նորից եմ կարդում այն, ինչ ինձ առանձնապես է դուր գալիս, կարդում եմ այնքան, մինչև որ անգիր անեմ: «Կար երկրում ռուսական մի քաղաք, որ կոչվում էր Մուրոմ, ու այնտեղ տեր ու տիրակալ էր մի իշխան Պավել անունով: Ու սատանան նրա կնոջ մոտ անառակության ուղարկեց թռչող օձի: Ու այդ օձը հայտնվում էր կնոջը մարդու կերպարանքով, չափազանց գեղեցիկ. . . »:

---

[9] Ռուսերեն сильный (ուժեղ) բառից (ծթ.):

Ես կատակով նայեցի սարսափած. . .

— Օ՜, սարսափ:

Նա, առանց ինձ լսելու, շարունակեց.

— Այդպես փորձում էր նրան աստված. «Երբ կնոջ բարեգութ մահվան ժամը եկավ, աղերսեցին աստծուն սույն իշխանն ու իշխանուհին, որ նույն օրը վախճանվեն: Ու պայմանավորվեցին թաղվել մի դագաղի մեջ: Ու հրամայեցին մի քարի վրա երկուսի գերեզման-դամբարանը տաշել: Ու նույնպես միաժամանակ երկուսն էլ վանականի զգեստ հագան. . . »:

Եվ դարձյալ իմ անտարբերությունը փոխվեց զարմանքի, նույնիսկ տագնապի. ի՞նչ է կատարվում նրա հետ այսօր:

Եվ ահա այդ երեկո, երբ նրան տուն տարա բնավ ոչ սովորական ժամին, տասնմեկին, նա հրաժեշտ տալիս հանկարծ մի րոպե պահեց ինձ, երբ արդեն սահնակ էի նստում.

— Սպասեք, վաղը երեկոյան ինձ մոտ եկեք ժամը

տասից ոչ շուտ: Վաղը Գեղարվեստական թատրոնի «կաղամբատոնն» է[10]:

— Հետո ի՞նչ,— հարցրի:— Ուզում եք գնալ այդ «կաղամբատոնի՞ն»:

— Այո:

— Բայց դուք ասում էիք, որ այդ «կաղամբատոներից» տափակ բան չկա:

— Հիմա էլ եմ ասում: Համենայն դեպս, ուզում եմ գնալ:

Ոչինչ չասացի, մտածելով ինքս ինձ. քմահաճույքներ, շարունակ մոսկովյան քմահաճույքներ, ու աշխույժ պատասխանեցի.

— Օ՜լ ռայտ:

Հաջորդ օրը երեկոյան ժամը տասին վերելակով բարձրանալով նրա դռան մոտ, բացեցի դուռն իմ բանալիով ու անմիջապես ներս չմտա մութ նախասենյակից. ներսում զարմանալի լույս էր. վառված էին բոլոր լույսերը՝ ջահերը, հայելու երկու կողմում ամրացված ճյուղավոր մոմակալները, բազմոցի գլխավերևում բարձր լամպը՝ թեթև լուսամփոփով, իսկ դաշնամուրը ձայնում էր «Լուսնի սոնատի» սկիզբը, շարունակ ավելի ու ավելի բարձր, ավելի ու ավելի տառապալից, կանչող, պայծառատես երանավետ տրտմությամբ: Փակեցի նախասենյակի դուռը, դաշնամուրի հնչյունները դադարեցին, լսվեց զգեստի խշխշոց: Ներս մտա. նա ուղիղ ու մի քիչ կեղծ կեցվածքով կանգնել էր դաշնամուրի մոտ սև թավշյա զգեստով, որ նրան ավելի էր բարակացնում, փայլելով այդ զգեստի շքեղությամբ, սև մազերի տոնական սանրվածքով, մերկ թևերի, ուսերի, կրծքի վերևի մուգ սաթագույնով, ալմաստե ականջօղերի շողարձակումով, աչքերի ածխասև թավիշով և շուրթերի թավշանման կարմիրով, քունքերի մոտ կիսաօղակների նման մինչև աչքերն էին հասնում սև փայլուն խոպոպիկները, նմանեցնելով նրան անճաշակ նկարներում պատկերված արևելյան գեղեցկուհու:

— Այ, եթե ես երգչուհի լինեի ու երգեի բեմում,— ասաց նա, նայելով իմ շվարած դեմքին,— ծափահարություններին կպատասխանեի սիրալիր ժպիտով ու գլխի թեթևակի խոնարհումով՝ աջ ու ձախ, վերև և դեպի պարտեր, հետն էլ աննկատելիորեն, զգույշ՝ ոտքով մի կողմ կիրեի զգեստիս քղանցատուտը, որ ոտքս վրան չդնեմ. . .

«Կաղամբատոնին» նա շատ ծխում էր և շարունակ կում-կում շամպայն էր խմում, ուշադիր նայելով դերասաններին, որ ժիր գոռգոռոցով ու կատակերգերով ներկայացնում էին իբր փարիզյան ինչ-որ բան, նայում էր սպիտակամազ ու սև հոնքերով խոշորամարմին Ստանիսլավսկուն[11] ու գիրուկ Մոսկվինին՝ քթակնոցը տաշտականման դեմքին. երկուսն էլ շինծու

---

[10] Դերասանական կամ ուսանողական ինքնագործ երեկո (ծթ.):

[11] Ստանիսլավսկի Կ. Ս. (1863—1938) — ռեժիսոր և դերասան, Մոսկվայի գեղարվեստական թատրոնի հիմնադիրը: Մոսկվին Ի. Մ. (1874—1946) — Մոսկվայի գեղարվեստական թատրոնի դերասան, ՍՍՀՄ

լրջությամբ ու ջանադրաբար ետ ու ետ ընկնելով եռանդով կանկան էին պարում հավաքվածների ուրախ քրքջոցի տակ: Ըմպանակը ձեռքին, խմելուց գունատված, մեզ մոտեցավ Կաչալովը, ըմպանակը բարձրացրեց ու շինծու մռայլ ագահությամբ նայելով նրան, ասաց իր ցածր դերասանական ձայնով.

— Աննման աղջիկ, Շամախանի թագուհի, քո կենացը:

Եվ նա դանդաղ ժպտաց ու բաժակ զարկեց նրա հետ: Կաչալով բռնեց նրա ձեռքը, հարբած կպավ շրթունքներով ու քիչ մնաց գետին տապալվեր: Մի կերպ իրեն պահեց և, ատամները սեղմած, նայեց ինձ.

— Իսկ սա՞ ինչ սիրուն տիպ է: Ատո՛ւմ եմ:

Հետո ճռճռաց, սուլեց ու թնդաց, թռչկոտելով պոլկա դոփեց երգեհոնիկը, և սահելով մեզ մոտ թռավ փոքրիկ, միշտ չգիտես ուր շտապող ու ծիծաղկոտ Սուլերժիցկին[12], խոնարհվեց, վաճառականական նրբակրթության նմանականությամբ, շտապով մռթմռթաց.

— Թույլ տվեք հրավիրել ձեզ պոլկայի. . .

Եվ նա ժպտալով վեր կացավ, հմտորեն, փոքրաքայլ դոփ-դոփելով, շողալով իր ականջօղերով, իր սևությամբ և մերկ ուսերով ու թևերով, անցավ նրա հետ փոքրիկ սեղանների արանքով՝ հիացական հայացքների և ծափահարության ներքո, մինչ պարընկերը գլուխը վեր տնկած բղավում էր կոկորդը պատռելով.

Գնանք, գնանք ես ու դու,

Գնանք պոլկա պարելու:

Գիշերվա ժամը երեքի մոտ նա վեր կացավ, աչքերը փակելով: Երբ հագնվում էինք, նայեց իմ կղբենու գլխարկին, շոյեց կղբենու օձիքս և քայլեց դեպի դուռը, ասելով չգիտես կատակով թե լուրջ:

— Իհարկե գեղեցիկ է: Կաչալովը ճիշտ ասաց. «Օձ մարդու կերպարանքով, չափազանց գեղեցիկ. . . »:

Ճանապարհին լուռ էր, երեսներիս խփող ձյունաբքից գլուխը կախ գցած: Լիալուսինը սուզվում էր ամպերի մեջ Կրեմլի գլխին. «փայլփլող գանգ»,— ասաց նա: Սպասսկի աշտարակին ժամացույցը խփեց ժամը երեքը, ու նաև ասաց.

— Ինչ հինավուրց ձայն է, մի տեսակ թիթեղյա-թուջե: Ահա ճիշտ նույն կերպ, նույն ձայնով խփում էր գիշերվա երեքը և տասնհինգերորդ դարում: Եվ Ֆլորենցիայում էլ ճիշտ այդպիսի զարկ է, այն ինձ հիշեցրեց այնտեղ Մոսկվան. . .

Երբ Ֆյոդորը կանգ առավ մուտքի մոտ, անկենդան ձայնով հրամայեց.

— Բաց թող նրան. . .

Անակնկալի եկած,— նա երբեք թույլ չէր տալիս ինձ բարձրանալ իր մոտ գիշերը,— ասացի շփոթված:

Ֆյոդոր, ես ոտքով կվերադառնամ. . .

ժողովրդական դերասան, Կաչալով (Շվերուբովիչ Վ. Ի.) (1875—1948) — Մոսկվայի գեղարվեստական թատրոնի դերասան, ՍՍՀՄ ժողովրդական դերասան: (ծթ.):

[12] Սուլերժիցկի Լ. Ա. (1872—1916) — թատերական գործիչ և գրականագետ, 1905 թ. Մոսկվայի գեղարվեստական թատրոնի ռեժիսոր (ծթ.):

Եվ լուռ բարձրացանք վերելակով, մտանք բնակարանի գիշերային տաքության ու լռության մեջ, օդաջեռոցիչի համաչափ տկտկոցի տակ: Հանեցի նրա ձյունից թաց մուշտակը, նա գլխից ձեռքերիս նետեց աղվամազե թաց գլխանոցը և արագ, ներսի մետաքսե շրջազգեստը խշխշացնելով, գնաց ննջասենյակ: Հանեցի վերարկուս, մտա առջևի սենյակը և սրտիս նվաղումով, ասես անդունդի եզրին, նստեցի թուրքական բազմոցին: Լուսավորված ննջարանի բաց դռնից լսվում էին նրա քայլերը, այն, ինչպես նա հերակալները պահած գլխի վրայով քաշեց-հանեց զգեստը. . . Վեր կացա ու մոտեցա դռանը. նա միայն կարապափետուրե մաշիկներով, մերկ մեջքն ինձ դարձրած, կանգնել էր հայելու առաջ և սանրում էր դեմքի երկայնությամբ կախված մազերի երկար, սև թելիկները:

— Ահա, շարունակ ասում էր, որ քիչ եմ մտածում իր մասին,— ասաց նա սանրը նետելով հայելու տակդիրին ու, մազերը մեջքին ետ գցելով, դարձավ ինձ:— Ոչ, ես մտածում էի. . .

Լուսադեմին զգացի նրա շարժվելը: Բացեցի աչքերս՝ նա սևեռուն նայում էր ինձ: Կիսաբարձրացա անկողնու ու նրա մարմնի տաքությունից, նա վրաս կռացած ասում էր կամացուկ ու հանդարտ:

— Այսօր երեկոյան մեկնում եմ Տվեր: Երկար ժամանակով, թե ինչքան՝ աստված գիտի. . .

Ու այտը սեղմեց այտիս. զգում էի ինչպես էր թարթում թաց թերթերունքը:

— Ամեն ինչ կգրեմ, հենց որ տեղ հասնեմ: Կգրեմ ամեն ինչ ապագայի մասին: Ներիր, հիմա թող ինձ, շատ եմ հոգնել. . .

Եվ պառկեց բարձին:

Ես զգուշորեն հագնվեցի, անհամարձակ համբուրեցի նրա մազերը և ոտքերիս մատների վրա դուրս եկա սանդուղք, որ արդեն լուսավորվում էր գունատ լույսով: Ոտքով քայլում էի նոր դրած կպչուն ձյան վրայով. բուքն արդեն դադարել էր, շուրջը խաղաղ էր և արդեն փողոցի երկայնությամբ երևում էր շատ հեռուն, և ձյան, և փռերի բուրմունք էր զգացվում: Հասա մինչև Իվերսկայա, որի ներսը տաք բոցկլտում ու հուրհրատում էր մոմերի խարույկներից, տրորված ձյան վրա ծնկի եկա պառավ կանանց և աղքատների բազմության մեջ, հանեցի գլխարկս. . . Ինչ-որ մեկը շոշափեց ուսս, նայեցի՝ մի դժբախտ, չորացած պառավ ինձ էր նայում խղճահարության արցունքներից դեմքը ծռմռած.

— Օհ, էդպես քեզ մի կոտորի, մի կոտորի: Մեղք է, մեղք:

Դրանից երկու շաբաթ հետո նրանից ստացածս նամակը կարճ էր. քնքշալի, բայց վճռական խնդրանք՝ չսպասելու նրան այլևս, փորձ չանելու որոնել, տեսնել. «Մոսկվա չեմ վերադառնա, առայժմ կգնամ ապաշխարության, իսկ հետո գուցեև վճռեմ կուսակրոնություն ընդունել. . . Թող աստված ուժ տա չպատասխանելու ինձ՝ ավելորդ է երկարացնել մեծացնել մեր տառապանքը. . . »:

Նրա խնդրանքը կատարեցի: Եվ երկար ժամանակ քարշ էի գալիս ամենակեղտոտ պանդոկներում, հարբում էի, ամեն կերպ իջնում, իջնում էի ավելի ու ավելի: Հետո սկսեցի կամաց-կամաց սթափվել՝ անտարբեր, հուսահատ. . . Անցավ գրեթե երկու տարի այն մեծ պասի առաջին երկուշաբթիից. . .

Տասնչորս թվականին, Նոր տարվա նախօրեին նույնպիսի խաղաղ, արևոտ իրիկուն էր, ինչպես այն անմոռանալի երեկո: Դուրս եկա տնից, կառք նստեցի ու գնացի Կրեմլ: Այնտեղ մտա ամայի Արխանգելսկի տաճարը, երկար կանգնեցի, առանց աղոթելու, տաճարի կիսամթի մեջ նայելով բեմի ու սեղանի միջնապատի ու մոսկովյան ցարերի տապանաքարերի հին ոսկու թույլ առկայծումին, կանգնել էի ասես սպասելով ինչ-որ բանի ամայի եկեղեցու այն բացառիկ լռության մեջ, երբ վախենում ես նույնիսկ շունչ քաշել: Տաճարից դուրս գալով, կառապանին հրամայեցի գնալ Օրդինկա, դանդաղ շարժվեցի, ինչպես այն ժամանակ, մութ նրբանցքներով, և շարունակ լալիս էի, լալիս. . .

Օրդինկայում կառքը կանգնեցրի Մարֆո-Մարինսկայա վանքի մոտ, այնտեղ բակում սևին էին տալիս կառքեր, երևում էր լուսավորված ոչ մեծ եկեղեցու բաց դուռը, դռնից լսվում էր կույսերի երգչախմբի թախծալի ու գթաշարժ երգեցողությունը: Չգիտես ինչու ցանկություն ունեցա

անպայման մտնելու այնտեղ: Դարպասի մոտ կանգնած բակապանը առաջս կտրեց, խնդրելով մեղմ, աղերսական.

— Չի կարելի, պարոն, չի կարելի.

— Ինչպե՞ս թե չի կարելի: Եկեղեցի մտնել չի՞ կարելի:

— Կարելի է, պարոն, իհարկե, կարելի է, միայն թե ի սեր աստծու, խնդրում եմ ձեզ ներս չգնաք, հիմա այնտեղ են մեծ իշխանուհի Ելիզավետա Ֆյոդորովնան և մեծ իշխան Միտրի Պալիչը. . .

Մի ռուբլի դրեցի ձեռքը, և նա տխուր հառաչեց ու ներս թողեց ինձ: Սակայն նոր էի մտել բակ, երևացին եկեղեցուց դուրս բերվող սրբապատկերները, խաչվառները, իսկ դրանց ետևից ոտքից գլուխ սպիտակ, երկար զգեստով նրբադեմ, ճակատին ոսկե խաչ ասեղնագործված սպիտակ քողով, դանդաղ, ջերմեռանդորեն աչքերը ցած գցած, մեծ մոմը ձեռքին շարժվում էր մեծ իշխանուհին. նրա ետևից շարժվում էր երգողների նույնպիսի սպիտակ շարքը, փոքրիկ մոմերի լույսերը դեմքերի մոտ պահած՝ միանձնուհիների թե գթության քույրերի, արդեն չհասկացա, թե ովքեր էինք դրանք և ուր էին գնում: Չգիտեմ ինչու շատ ուշադիր էի նայում նրանց: Եվ ահա մեջտեղում քայլողներից մեկը հանկարծ բարձրացրեց սպիտակ գլխաշորով ծածկված գլուխը, մոմի լույսը ձեռքով ծածկելով, մուգ աչքերի հայացքը հառեց մթությանը, թվաց ուղիղ ինձ. . . Ի՞նչ կարող էր տեսնել նա մթության մեջ, ինչպե՞ս կարող էր զգալ իմ ներկայությունը: Շրջվեցի ու լուռ դուրս եկա դարպասից:

12 մայիս 1944